ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան փ., շ. 55, Հեռ. (060)700131

N 1323-24
02 հուլիս 2024 թ.

,,Մ.Է.Դ. ՇԻՆ ԳՐՈՒՊ,, ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ԳԱՅԱՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ
Շիրակի մարզ, գ. Ախուրյան, Հ.Շահբազյան 10

Ծ Ա Ն Ու Ց Ում

Հարգելի՛ գործընկեր

Դիլիջանի համայնքապետարանի և«Մ. Է. Դ. ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ- ի,իդեմստնօրեն Գայանե Գասպարյանի, (այսուհետ՝Կատարող), միջև 07.03.2024թ. կնքվել է ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԽԾՁԲ-24/04 ծածկագրով «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Իվանովոյի փողոց - Անդրանիկի փողոց ճանապարհահատվածի ասֆալտապատման և մայթերի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և կազմում» ծառայությունների մատուցման պայմանագիրը: Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն, Կատարողը պարտավոր է N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

Հաշվի առնելով, որ սահմանված ժամկետում «Մ. Է. Դ. ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից չեն կատարվել պայմանագրային պարտավորությունները, Դիլիջանի համայնքապետարանի և«Մ. Է. Դ. ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի,միջև 07.03.2024թ. կնքված ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԽԾՁԲ-24/04 ծածկագրով «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Իվանովոյի փողոց - Անդրանիկի փողոց ճանապարհահատվածի ասֆալտապատման և մայթերի հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և կազմում» ծառայությունների մատուցման պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ինմասի 6-րդ կետի ա) ենթակետիհամաձայն, Մասնակիցնընդգրկվումէգնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը,որը հանգեցրել էպատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ եթե սույն ծանուցումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում վճարվի պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ապա«Մ. Է. Դ. ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**